# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

№ Ե -03/208

«18» 10. 2019թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 30-Ա, 31-Ա , 32-Ա և 33-Ա որոշումները:

Առդիր 6 էջ :

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 16'' հոկտեմբերի 2019 թվականի N30-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին'' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2019թ. հոկտեմբերի 16-ի արտահերթ նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1. Շիրակամուտ համայնքի 2019 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին
2. Ժ.Պետրոսյանին պատկանող կիսակառույցին անհատույց շինարարության թույլտվություն տրամադրելու մասին
3. Շիրակամուտի համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0065-0015 ծածկագրով 0, 08042հա հողամասը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/ 5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | [signature] | | |
| Հ.Մազմանյան | [signature] | | |
| Ն.Նասլյան | [signature] | | |
| Ա.Պապոյան | [signature] | | |
| Հ.Նալբանդյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Յայաստանի Յանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

,,16" հոկտեմբերի 2019 թվականի N31 -Ա

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ III-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի՝ 2019 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին ներկայացրած հաղորդումը ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1.Ընդունել ի գիտություն Շիրակամուտ համայնքի 2019 թվականի բյուջեի III-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

| Յամայնքի ավագանու անդամներ | կողմ/ 5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
Շիրակամուտ համայնքի ավագանու
,,16" հոկտեմբերի 2019թ. N31 -Ա որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Շիրակամուտ համայնքի 2019թ.բյուջեն 3-րդ եռամսյակի կտրվածքով կատարվել է ա/եկամուտների գծով 98,4 տոկոսով, նախատեսված 44388,9հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 43694,4 հազար դրամ:

Սեփական եկամուտները,( հարկեր և տուրքեր,այլ եկամուտներ,մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 6236,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են5794,4հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 92,9%-ով:

Պաշտոնական դրամաշնորհների գծով (ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 35287,9հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 35287,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100%:

բ/ Ծախսերի գծով կատարվել է 98,4 %-ով, նախատեսված 44388,9 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 43694,4 հազար դրամ:

## 1.Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի եկամուտները 9 ամսվա համար նախատեսված 44388,9 հազար դրամի դիմաց կազմել են 43694,4հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98,4%

### 1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով 9 ամսվա համար նախատեսված 3190,4 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 3187,8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99,9 %

### 1.2 Գույքահարկ

Գույքահարկի գծով 9 ամսվա համար նախատեսված 2765,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2318,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 83,8%

### 1.3 Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները 9 ամսվա համար նախատեսված 280,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 275,7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98,5 %:

### 1.4 Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով 9 ամսվա համար նախատեսված 2865,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2612,4 հազար դրամ, 98,5%:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ չեն կատարվել:

Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը 0 դրամ է:

## 2.Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը 9 ամսվա համար նախատեսված 44388,9 հազար դրամի դիմաց կատարվել է 43694,4 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98,4%:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՛

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 85%:
Սոցիալական պաշտպանություն 78,3%:

## 3.Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեով 9ամսվա համար նախատեսված ծախսեր՝460,0հազար դրամ:

Տնտեսական հարաբերություններով մուտքագրվել է 78,1 հազար դրամ:

Շիրակամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Առաջատար մասնագետ հաշվապահ՝ Ա.Մազմանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

## ՈՐՈՇՈՒՄ

,, 16” հոկտեմբերի 2019 թվականի N32-Ա

### Ժ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 25.01.2019թվականի, թիվ 01/101.1/00414-19 գրությունը և հաշվի առնելով,որ անավարտ բնակելի տների շինարարական աշխատանքները իրականացվելու է <<Ֆուլեր տնաշինական կենտրոն>> բարեգործական հասարակական կազմակերպության կողմից,որը շահույթ չի հետապնդում, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.. Շիրակամուտ համայնքի բնակիչ , շահառու՝ Ժորա Ալեքսանի Պետրոսյանի անավարտ բնակելի տան շինարարական աշխատանքները սկսելու համար 11-րդ փողոցի թիվ 11 հասցեի վրա գտնվող `06-087-007-004 կադաստրային ծածկագրով 0,107 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա կառուցված կիսակառույցին անհատույց տրամադրել շինարարության թույլտվություն:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/ 5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

# ՈՐՈՇՈՒՄ

,, 16” հոկտեմբերի 2019 թվականի N33-Ա

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-087-0065-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0, 08042 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ.286-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 06-087-0065-0015 ծածկագրով , 21-րդ փողոց 3/1 հասցեում գտնվող 0,08042 հա մակերեսով հողամասը մեկ լոտով աճուրդ վաճառքով օտարելու: Մեկնարկային գինը 178500 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 2000 ՀՀ դրամ, նախավճարը ՝ մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը 5000 ՀՀ դրամ: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան